ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 սեպտեմբերի 2023 թվականի N 1303

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ, ԹԻՎ 4/1 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Աշիկի Նալբանդյանի 09.08.2022թ. թիվ 02/9094 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 23.06.2023թ. տրված շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի մասին թիվ ՎՆ1-08/23ա եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 08.08.2022թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022RRLMKN),անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /63027/, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 3-րդ փակուղի, թիվ 4/1 հասցեին կից ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 27.9քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 20.4քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 27.9քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցները:

3. Փոխել Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 3-րդ փակուղի, թիվ 4/1 հասցեին կից գտնվող ավտոտնակի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0.00279հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

6. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 3-րդ փակուղի, թիվ 4/1 հասցեին կից գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝Վանաձոր համայնք Վանաձոր ք., Գ. Նարեկացու փողոց, 3-րդ փակուղի, 4/2 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 18
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 սեպտեմբերի 2023 թվականի N 1304

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 37/14-1 ՀԱՍՑԵԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գրիգոր Անդրուշի Բաբայանի 21.06.2022թ. թիվ 02/6134 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 23.06.2023թ. տրված շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-07/23ա եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 21.06.2022թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022XBVUQP),անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /59207/, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 37/14-1 հասցեի հարավային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 26.9քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 24.0քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 26.9քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցները:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված

ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 37/14-1 հասցեի հարավային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝Վանաձոր համայնք Վանաձոր ք., Գ. Նարեկացու փողոց, 8/38 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 18
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2023 թվականի N 1305

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ 4-ՐԴ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲ. ԹԻՎ 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵԼԱՆԻԱ ԱԼԵՔՍՈՒ ՀԱՄԲԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մելանիա Ալեքսու Համբարյանի (ծնված՝ 14.11.1956թ.) 22.05.2023թ. թիվ 02/8237 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 21.12.1987թ. տրված տեխնիկական անձնագիրը, 13.01.2023թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 91 (նոտարական ակտի կոդ: 775-20221123-84-6471118) և 13.01.2023թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 92 (նոտարական ակտի կոդ: 775-20221123-84-6471755) վկայագրերը, 14.02.2023թ. ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023BF7LJJ), 11.08.2023թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-256/23 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /112913/, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ Ռուդիկի» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի, Տավրոս 4-րդ փողոց 2-րդ նրբ. թիվ 15 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1281.7քմ և կից 8.1քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գուտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1990-2000թթ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1289.8քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Մելանիա Ալեքսու Համբարյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի, Տավրոս 4-րդ փողոց 2-րդ նրբ. թիվ 15 հասցեում գտնվող բնակելի տան

կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1281.7քմ մակերեսով հողամասին կից 8.1քմ մակերեսով հողամասերի նկատմամբ:
2. Ճանաչել Մելանիա Ալեքսու Համբարյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի, Տավրոս 4-րդ փողոց 2-րդ նրբ. թիվ 15 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 1289.8քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Տավրոս թաղամասի 4-րդ փողոց, 15/3 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2023 թվականի N 1306

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 06-084-0332-0030) ԳՏՆՎՈՂ ՍՎԵՏԼԱՆԱ ԱՐԶՈՒՄԱՆԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԽՈՏՀԱՐՔԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սվետլանա Արզումանի Սիմոնյանի (ծնված՝ 01.06.1942թ.) լիազորված անձ Գագիկ Վոլոդյայի Պողոսյանի (ծնված՝ 06.01.1981թ.) 16.05.2023թ. թիվ 02/7955 դիմումը, Հողհատկացման ցուցակի պատճենը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 26.05.2022թ. տրված թիվ 2899 (նոտարական ակտի կոդ՝ 763-20220526-90-5934450) լիազորագիրը, 12.05.2023թ. թիվ 161 տեղեկանքը, տնային տնտեսության հաքշվառման գրքից թիվ 641 անձնական հաշվի պատճենը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված խոտհարքի հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698 որոշումով, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 16-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանում (ծածկագիր՝ 06-084-0332-0030) գտնվող 1.559798հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Վերականգնել Սվետլանա Արզումանի Սիմոնյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանում գտնվող (ծածկագիր՝ 06-084-0332-0030), ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 1.559798հա մակերեսով խոտհարքի հողհատկացման հիմքերը՝ համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2023 թվականի N 1307

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԴԱՐՊԱՍ 06-033-0060-0005 ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սարո Սերոժի Աբրահամյանի լիազորված անձ՝ Արթուր Արագածի Աբրահամյանի 14.08.2023թ. 02/13735 դիմումը, 30.05.2022թ. թիվ 25 ԱԱ 3707479 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի ռուսերենից հայերեն թիվ 5863 թարգմանությունը, 21.03.2023թ. թիվ 25 ԱԱ 3720985 լիազորագրի ռուսերենից հայերեն թիվ 6004 թարգմանությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11082023-06-0082 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք գյուղ Դարպաս 06-033-0060-0005 ծածկագրով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք գյուղ Դարպաս, 6-րդ փողոց, 19 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2023 թվականի N 1308

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼԱԶՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 58 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՅՐԱՆ ՀԱՅԿԱԶԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեյրան Հայկազի Կիրակոսյանի (ծնված՝ 02.02.1961թ.) լիազորված անձ Հայկանուշ Ստեփանի Կիրակոսյանի դիմումը, 13.01.2021թ. տրված թիվ 71(նոտարական ակտի կոդ: 741-20210113-90-4876879) լիազորագիրը, 24.09.1977թ. տրված գույքային թերթը, 01.03.2022թ. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԴ/4309/02/21 քաղաքացիական գործով վճիռը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 20.07.2023թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-217/23 Ի եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 11.08.2023թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023EZ4AVR), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 58 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 237.1քմ մակերեսով հողամասը և դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1930-2006թթ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 237.1քմ, որից 23.8քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր օգտագործման ճանապարհ: Սեյրան Հայկազի Կիրակոսյանին պատկանող հողամասի մակերեսը կազմում է 225.2քմ(237.1-23.8:2):

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Սեյրան Հայկազի Կիրակոսյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 58 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 225.2քմ(237.1-23.8:2) մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող

բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ, բացառությամբ՝ 15.05.2001թ.-ից հետո ինքնակամ կառուցված 6.0քմ մառանից:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 58 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ս. Լազյան փողոց, 58/3 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2023 թվականի N 1309

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 15 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆԱՀԻՏ ՀԵՆՐԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Հենրիկի Պողոսյանի լիազորված անձ Էմիլ Ռաֆիկի Յավրյանի 28.05.2023 թվականի թիվ 02/10803 դիմումը, 04.12.1989թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 14.10.2022 թվականի լիազորագիրը, «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի ու շինությունների հատակագիծը հատակագիծը, շինություններ բնութագիրը մասնագիտական եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Նալբանդյան 2-րդ նրբանց 15 հասցեում կառուցած բնակելի տունը, շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 0.0325 հա մակերեսով հողամասերը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0.0650հա /0.063764հա + 0.002472:2/, ընդ որում 0.002472հա հողամասը հանդիսանում է սեփականություն Վանաձոր ք. Նալբանդյան փողոց 2 նրբանց 15 բնակելի տան սեփականատերերի և Անահիտ Հենրիկի Պողոսյանի տնատիրության միջև յուրաքանչյուր տնատիրության բաժնեմասը կազմում է 0.0325.հա /0.063764հա+ 0002472:2/:2, որից 175.0քմ հողամասը օրինական է:

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Անահիտ Հենրիկի Պողոսյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Նալբանդյան 2-րդ նրբանց 15 հասցեում գտնվող անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 0.0325 հա մակերեսով հողամասի նկատմամբ:

Հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0.0650 հա մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն երկու տնատիրությունների միջև: Անահիտ Հենրիկի

Պողոսյանի բաժնեմասը կազմում է 0.0325 հա /0.063764հա+ 0002472:2/:2 մակերեսով հողամաս:

2. Ճանաչել Անահիտ Հենրիկի Պողոսյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Նալբանդյան 2-րդ նրբանց 15 հասցեում գտնվող 64.75 քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Վանաձոր քաղաքի Նալբանդյան 2-րդ նրբանց 15 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք,Վանաձոր ք., Մ. Նալբանդյան փողոց, 2-րդ նրբանցք, 15/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2023 թվականի N 1310

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06 ՄԱՐՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 456 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արեն Սամվելի Սարդարյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 06 մարտի 2023 թվականի թիվ 456 որոշումը, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված 27.12.2022թ. թիվ ՎՆ 1- 270/22Ի եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 16.03.2023թ. թիվ Կ-16032023-06-0132 որոշումը, 15.06.2023 թվականի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023GLKBUW), ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 06 մարտի 2023 թվականի «Վանաձոր քաղաքի Կնունյանց փող թիվ 40 ա, Կնունյանց փողոց 40, Կնունյանց փողոց 40 և Կնունյանց փողոց 40/1 հասցեներում գտնվող Արեն Սամվելի Սարդարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը և դրանց վրա գտնվող շինությունները որպես մեկ գույքային միավոր միավորելու, ինքնակամ կառուցած շինությունը օրինականացնելու, հողամասերի ճշտված սահմանները հաստատելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 456 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1.Որոշման վերնագրում «ինքնակամ շինությունը» բառերը փոխարինել «ինքնակամ շինությունները» բառերով:

2. Որոշման 3-րդ կետը «պարիսպը» բառից հետո լրացնել՝ «և 66.61 քմ ընդհանուր արտաքին մակերեսով (62.71 քմ՝ ներքին մակերես) բնակելի նշանակության շինությունները» բառերով:

3. Որոշման 4-րդ կետում «156980 (հարյուր հիսունվեց հազար ինը հարյուր ութսուն)» բառերը փոխարինել «311250 (երեք հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր հիսուն)» բառերով:

4. Արեն Սամվելի Սարդարյանին՝ ինքնակամ շինությունների օրինականացման համար սահմանված վճարի տարբերությունը՝ (311250-156980) 154270 (հարյուր հիսունչորս հազար երկու հարյուր յոթանասուն) դրամ գումարը վճարել 900235401057 հաշվեհամարին»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2023 թվականի N 1311

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 07 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1107 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 07 օգոստոսի 2023 թվականի թիվ 1107 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի ղեկավարի 07 օգոստոսի 2023 թվականի «Վանաձոր Վանաձոր քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 58/18 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված ավտոտնակը, ծածկը եվ դրանցով զբաղեցված հողամասը Արեն Կարենի Թորոսյանին օտարելու մասին» թիվ 1107 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Որոշման վերնագրում և հիմքում «Կարենի» բառը փոխարինել «Կառլենի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2023 թվականի N 1312

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ՔՇՀ-3 ԹԱՂԱՄԱՍ 15/18 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՈՒՇ ՄԱՄԻԿՈՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անուշ Մամիկոնի Սարգսյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14082023-06-0016 և Անուշ Մամիկոնի Սարգսյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 17092020-06-0008 վկայականները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 8-րդ կետերով, 12.04.2022թ. «ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ընդունած ՀՕ 93-Ն ՀՀ օրենքով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ-3 թաղամաս 15/18 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 13.3քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14082023-06-0016 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 59080 (հիսունինը հազար ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Անուշ Մամիկոնի Սարգսյանին՝ հողամասի ընդլայնման նպատակով:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Անուշ Մամիկոնի Սարգսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 13.3քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ համայնքի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2023 թվականի N 1313

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔ ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 49Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտյոմ Վրեժիկի Աբրահամյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման թիվ 1924850 վկայականը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25052017-06-0011 վկայականը, 29.08.2023 թվականի անշարժ գույքի առուվաճառքի թիվ 8512 պայմանագիրը/ նոտարական ակտի կոդ: 769-20230829-2-7242999/, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 04.09.2023 թվականի թիվ Կ-04092023-06-0030 որոշումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաք Լուսավորիչի փողոց թիվ 49ա հասցեում գտնվող խանութին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Գ. Լուսավորչի փողոց, 49/2 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2023 թվականի N 1314

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ, Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 8/11 ԵՎ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 8/12 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱՐԵՆ ԱՇՈՏԻ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարեն Աշոտի Մելիքյանի լիազորված անձ Աշոտ Շահազիզի Մելիքյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 28082023-06-0018 և 31072023-06-0052 վկայականները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, եզրակացությունը, 08.09.2023թ. տրված թիվ 19249 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 509-20230908-79-7274758), ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր համանք Վանաձոր քաղաքի Հ. Թումանյան փողոց 8/11 և Հ. Թումանյան փողոց 8/12 հասցեներում գտնվող Կարեն Աշոտի Մելիքյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 0.02688հա ընդհանուր մակերեսով հողամասերը և 681.78 քմ ընդհանուր մակերեսով շինությունները՝ համաձայն «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Հ. Թումանյան փողոց, 8/11 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 19
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2023 թվականի N 1315

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ (ՆԱԽԿԻՆ ԺԴԱՆՈՎ) 4-ՐԴ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 44 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԻՆԱ ՀԱՅԿԱԶԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալինա Հայկազի Նավասարդյանի (ծնված՝ 10.01.1951թ.) 15.06.2023թ. թիվ 02/9736 դիմումը, 04.02.1997թ. տրված սեփականության վկայագիրը, 01.04.2022թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1659 (նոտարական ակտի կոդ: 763.-20220401-84-5800290) վկայագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /107568/,ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների ռատակագիծը, շինությունների բնութագիրը, և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) 4-րդ փողոց,1-ին նրբանցք 44 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 431.62քմ մակերեսով հողամասը և դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1960թ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 431.62քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Ալինա Հայկազի Նավասարդյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) 4-րդ փողոց,1-ին նրբանցք 44 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 431.62քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) 4-րդ փողոց,1-ին նրբանցք 44 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Տավրոս թաղամասի 4-րդ փողոց,2-րդ նրբանցք, 44/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Ա. ՓԵԼԵՇՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 20
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2023 թվականի N 1316

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 84/1-8 ԵՎ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 88/1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐԹՈՒՐ ԱԼԲԵՐՏԻ ՇԵԿՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ,ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Ալբերտի Շեկոյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04092023-06-0043 և թիվ 16112022-06-0031 վկայականները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով,ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 84/1-8 և Երևանյան խճուղի թիվ 88/1 հասցեներում գտնվող Արթուր Ալբերտի Շեկոյանին սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր 0.02364հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Միավորել Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 84/1-8 և Երևանյան խճուղի թիվ 88/1 հասցեներում գտնվող Արթուր Ալբերտի Շեկոյանին սեփականության իրավունքով պատկանող 0.02364հա ընդհանուր մակերեսով հողամասը՝ համաձայն ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Երևանյան խճուղի թիվ 88/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Ա. ՓԵԼԵՇՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 20
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2023 թվականի N 1317

ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ԿԱՐԵՆ ԱՆԱՏՈԼԻԻ ՕՍԻՊՈՎԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Անատոլիի Օսիպովի դիմումն իր անգործունակ եղբոր՝ Կարեն Անատոլիի Օսիպովի նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2023 թվականի սեպտեմբերի 08-ին տրված եզրակացությունը (արձանագրություն թիվ 16, կետ 2), նաև Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2023 թվականի մայիսի 25-ի թիվ ԼԴ/6180/02/22 քաղաքացիական գործով Կարեն Օսիպովին անգործունակ ճանաչելու մասին վճիռը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածով, ***որոշում եմ՝***

Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտայի թիվ 79 շենքի թիվ 54 բնակարանի բնակիչ՝ Արմեն Անատոլիի Օսիպովին (ծնված՝ 06.10.1981թ., անձնագիր՝ AV 0519518, տրված՝ 15.11.2022թ., 033-ի կողմից) նշանակել իր անգործունակ եղբոր՝ Կարեն Անատոլիի Օսիպովի (ծնված՝ 10.07.1975թ., անձնագիր՝ AS 0285727, տրված՝ 17.07.2018թ., 066-ի կողմից) նկատմամբ խնամակալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Ա. ՓԵԼԵՇՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 20
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2023 թվականի N 1318

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐ-ԴՈՍԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 66 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՄՎԵԼ ՍԱՐԻԲԵԿԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Սարիբեկի Գալստյանի (ծնված՝ 10.10.1959թ.) դիմումը, 1998թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունը, 26.06.2023թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-191/23 Ի եզրակացությունը, «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023YEQXFQ), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Նար-Դոսի փողոց թիվ 66 հասցեում կառուցած բնակելի տունը, շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ օրինական 254.0քմ հողամասին կից 54.6քմ մակերեսով հողամասերը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1950-1993թթ.-ին, դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 308.6քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Սամվել Սարիբեկի Գալստյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Նար-Դոսի փողոց թիվ 66 հասցեում հասցեում գտնվող անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 254.0քմ հողամասին կից 54.6քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Սամվել Սարիբեկի Գալստյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Նար-Դոսի փողոց թիվ 66 հասցեում գտնվող 308.6քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Վանաձոր քաղաքի Նար-Դոսի փողոց թիվ 66 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Նար-Դոսի փողոց թիվ 66 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 22
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2023 թվականի N 1319

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՐԱՑԱՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՅԻՍ ԵՆՈՔԻ ՕՀԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մայիս Ենոքի Օհանյանի (ծնված՝ 01.05.1950թ.) դիմումը, 05.01.1987թ. տրված տեխնիկական անձնագիրը, 07.09.2023թ «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-299/23Ի եզրակացությունը, 31.08.2023թ. ՀՀ կադաստրի կոմիտե տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023DAUUKV), ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Մուրացանի փողոց թիվ 1 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 452.76քմ մակերեսներով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1990թ-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 452.76քմ :

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Մայիս Ենոքի Օհանյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Մուրացանի փողոց թիվ 1 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 452.76քմ մակերեսով մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Մայիս Ենոքի Օհանյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Մուրացանի փողոց թիվ 1 հասցեի 452.76քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության շինությունների նկատմամբ:

3. Հողամասի չափմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Վանաձոր քաղաքի Մուրացանի փողոց թիվ 1 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Մուրացանի փողոց թիվ 1/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 22
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2023 թվականի N 1320

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱԹԵՎԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԻԴԱ ՊԵՏՐՈՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աիդա Պետրոսի Հովհաննիսյանի (ծնված՝ 25.03.1957թ.) լիազորված անձ Հասմիկ Պետրոսի Դանիելյանի դիմումը, 24.08.2022թ. տրված թիվ 5202 (նոտարական ակտի կոդ 763-20220824-79-6203704) լիազորագիրը, 20.06.1986թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական պասպորտը, 14.10.1974թ. տրված գույքային թերթը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 03..03.2023թ. տրված ըստ օրենքի ժառանգության թիվ 1006 (նոտարական ակտի կոդ 594-20230303-84-6726607) և թիվ 1007 (նոտարական ակտի կոդ 594-20230303-84-6726591) վկայագրերը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 24.03.2023թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023NTFLCX), ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Տաթևի փողոց թիվ 3 հասցեի բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ օրինական 258.66քմ մակերեսով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը և շինությունները կառուցվել է 1953-1986թթ., բնակելի տան կառուցման ու սպասարկման հողամասի մակերեսը փաստացի կազմում է 297.52քմ, որից 77.72քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն երկու տնատիրությունների միջև հավասար բաժիններով: Աիդա Պետրոսի Հովհաննիսյանի հողամասի բաժնեմասը կազմում է 258.66քմ /219.8+77.72 : 2/, որը զբաղեցվել և շահագործվում է 1953թ.:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Աիդա Պետրոսի Հովհաննիսյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տաթևի փողոց թիվ 3 հասցեում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված

անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 258.66քմ /219.8+77.72 : 2/ մակերեսով հողամասի վրա գտնվող շինությունների նկատմամբ ըստ շինությունների բնութագրի:

Հողամասի մակերեսը փաստացի կազմում է 297.52քմ, որից 77.72քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն երկու տնատիրությունների միջև հավասար բաժիններով: Այդա Պետրոսի Հովհաննիսյանի հողամասի բաժնեմասը կազմում է 258.66քմ /219.8+77.72 : 2/

2.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3.Վանաձոր քաղաքի Տաթևի փողոց թիվ 3 հասցեի բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տաթևի փողոց, 3 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 22
ք.Վանաձոր